ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՂԵԿԱՎԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՎՉՄ Եղեգնաձորի առաջին հիմնական դպրոց /ՊՈԱԿ/

8-րդ “Բ” դասարան

Հաստատվում է:
Տնօրեն՝ Գ. Աբրահամյան
15.09.2023թ.

Լիանա Մանասերյան

2023-2024 ուսումնական տարի

Համաձայն է
ՎՉՄ Եղեգնաձորի ավագ դպրոցի տնօրեն՝
Հ. Գասպարյան

Tiny Scanner

ԿՐԹԱԿԱՆ_ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ /դասարանի ընդհանուր բնութագիրը/__8-րդ ՛՛բ՛՛դասարանում

2023-2024 ուսումնական տարին սկսեցինք 19 աշակերտով , որոնցից 8-ը ՝տղա, 11-ը ՝աղջիկ:

Չունենք նորեկ աշակերտ: Դասարանում տիրում է ջերմ, ընկերական մթնոլորտ : Ակնհայտ է երեխաների պատրաստակամությունը միմյանց օգնելու հարցում: Ընդհանուր առմամբ դասարանը բավականին ակտիվ է, համախմբված:

Միշտ միասնական մասնակցում են դպրոցական բոլոր միջոցառումներին և հասարակական որևէ աշխատանքի : Կարգապահ են, պատասխանատու: Դասարանում ծագած որևէ խնդիր լուծում են ըմբռնումով ու միասնական:

Tiny Scanner

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

1. Հիշեցնել աշակերտների իրավունքներն ու պարտականությունները

2. Ծանոթություն դպրոցի կարգապահական կանոններին

3.Հույզերի և ժամանակի կառավարում

4. Սովորողների մեջ ձևավորել շփվելու, հաղորդակցվելու կարողություն

5. Ձևավորել ու զարգացնել արժեքային համակարգը

6. Օգնել ետ մնացող ընկերներին

7.Դաստիարակել սեր և նվիրվածություն հայրենիքի հանդեպ

8. Ամրապնդել ուսուցիչ- աշակերտ-ծնող կապը

9. Սովորեցնել ճիշտ վերաբերմունք մեծերի ու հասակակիցների նկատմամբ

Tiny Scanner

1 Հոգևոր դաստիարակություն:

Ճիշտ ուղղորդել աշակերտներին դեպի հայ առաքելական եկեղեցին: Նպաստել սովորողների հոգևոր-ազգային ճիշտ նկարագրի ձևավորմանը: Նրանց հաղորդակից դարձնել ազգային և համամարդկային արժեքներին: Զերծ պահել տարատեսակ աղանդներից: Մասնակից դարձնել ազգային ավանդույթներին և եկեղեցական տոներին:

2 Գեղագիտական դաստիարակություն

Նպատակն է սովորողների մեջ ձևավորել գեղեցիկը զգալու, հասկանալու և կիրառելու հմտություններ: Սովորել գեղեցիկը ընկալել գեղարվեստական գրականությունից, արվեստից, միջավայրից և այն դարձնել սեփականը: Դաստիարակել երեխաների մեջ սեր գեղեցիկի նկատմամբ: Սիրել և պահպանել մեզ շրջապատող միջավայրի գեղեցկությունը:

3 Ռազմա-հայրենասիրական դաստիարակություն

Դաստիարակել սեր և նվիրվածություն հայրենիքի նկատմամբ: Պատրաստակամ լինել վաղվա զինվորը դառնալու գործին: Այդ գործընթացի ձևավորման համար կարևորել ազգային ինքնագիտակցության ձևավորումը, մեր պատմության հերոսական էջերի իմացությունը: Սովորեցնել երբեք չհուսահատվել և չընկճվել անհաջողություններից ու մնալ պայքարի առաջամարտիկ:

4 Ֆիզիկական դաստիարակություն

Կարևորել առողջ ապրելակերպի անհրաժեշտությունը կյանքում: Ճիշտ կազմակերպել օրվա ռեժիմը: Խթանել տարբեր սպորտային խմբակների հաճախմանը:

Tiny Scanner

Սովորեցնել ակտիվ հանգստի ճիշտ կազմակերպում: Հաճախակի կազմակերպել արշավներ, էքսկուրսիաներ դեպի բնության գիրկը: Սովորեցնել ակտիվ մասնակցություն ունենալ բոլոր տեսակի սպորտային միջոցառումներին, սպորտլանդիաներին:

5 Աշխատանքայի դաստիարակություն

Մշտապես կազմակերպել տարբեր հանրօգուտ-հասարակական աշխատանքներ: Աշակերտների մեջ դաստիարակել աշխատասիրություն, եռանդ և վաստակելու ձգտում: Ներգրավել աշակերտներին աշխատանքային գործընթացի մեջ ՝ դպրոցամերձ տարածքի մաքրում, ծառատնկում, կանաչապատում և այլն: Սովորեցնել, որ աշխատանքն է ամեն բարիքի աղբյուրը: Ակտիվ մասնակցություն ցուցաբերել կազմակերպված բոլոր շաբաթօրյակներին:

6 Բնապահպանական դաստիարակություն

Զարգացնել աշակերտների մեջ գիտակցություն, որ առանց մայր բնության կյանք չկա: Սովորեցնել պահել ու պահպանել շրջակա միջավայրը աղտոտումից: Սերմանել աշակերտների մեջ սեր և հոգատարություն կենդանական և բուսական աշխարհի նկատմամբ: Ակտիվորեն մասնակցել բոլոր շաբաթօրյակներին , ծառատունկին: Սովորեցնել ապրել ու առաջնորդվել այն սկզբունքով,որ մարդն առանց մայր բնության ապրել չի կարող :

Tiny Scanner

ԴՊՐՈՑ _ ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

Դպրոցը և ընտանիքը պետք է լինեն սերտ կապի մեջ: Յուրաքանչյուր հարցում պետք է լինի փոխադարձ աջակցություն: Աշակերտը պետք է գիտակցի, որ դպրոցը իր երկրորդ տունն է: Ծնողը միշտ պետք է համագործակցի դպրոցի հետ՝ նպաստելով երեխայի ճիշտ դաստիարակությանը: Այդ նպատակով պետք է հաճախակի կազմակերպվեն ծնողական ժողովներ, տարբեր միջոցառումներ, այցելություններ մշակութային օջախներ:

Tiny Scanner

ՈՒՍՈՒՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնադաստիարակչակա աշխատանքների բովանդակությունը	կատարողներ
1-ին	Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները Կազմակերպչական հարցեր	Դասղեկ
2-րդ	Ծանոթացնել երթևեկության կանոններին	Դասղեկ
3-րդ	Զրույց անկախության մասին	Դասղեկ,ՆԶՊ-ի ուսուցիչ
4-րդ	44-օրյա պատերազմի հիշատակի օր	Դասղեկ, զինղեկ
5-րդ	՝՝Շնորհավոր տոնդ , ուսուցիչ՝՝	Դասղեկ
6-րդ	"Իմ քաղաք՝ Եղեգնաձոր շրջագայություն քաղաքում	Դասղեկ
7-րդ	Կազմակերպչական հարցերի քննարկում: Անհատական աշխատանք հետ մնացող աշակերտների հետ	Դասղեկ
8-րդ	Գիտելիքը որպես ինքնահաստատման միջոց /քննարկում /	Դասղեկ
9-րդ	"Ինչպես պաշտպանվել " Թրաֆիքինգը և նրա հետևանքները /զրույց /	Դասղեկ, հոգեբան
10-րդ	"Թվերի աշխարհում՝՝ /խ ա ղ -մ րցույթ /	Դասղեկ, մաթեմատի կայի ուսուցիչ
11-րդ	'Աշնանային էտյուդներ " պատի թերթ	դասղեկ, նկարչութ-յան ուս.

Tiny Scanner

12-րդ	Համակարգչի դերը և նշանակությունը կրթական ոլորտում	Ինֆորմատի կայի ուս., դասղեկ
13-րդ	Երկրաշարժը և դրանից պաշտպանվելու միջոցները /ֆիլմի դիտում և քննարկում /	Դասղեկ, զինղեկ
14-րդ	Հաշմանդամները և նրանց ինտեգրումը հասարակությանը /զրույց/	դասղեկ, հոգեբան
15-րդ	Ինչ է նշանակում լինել քաղաքակիրթ /զրույց /	դասղեկ
16-րդ	2-րդ կիսամյակի անելիքների քննարկում : Զրույց կազմակերպչական հարցերի շուրջ	դասղեկ
17-րդ	Սպորտի դերն ու նշանակությունը մեր կյանքում /զրույց ձմեռային մարզաձևերի շուրջ /	դասղեկ, ֆիզկուլտուրայի ուսուցիչ
18-րդ	Հանցագործությունը վաղ տարիքում /զրույց թեմայի շուրջ /	դասղեկ
19-րդ	Վատ սովորույթներ և պայքար դրանց դեմ /զրույց/	Դասղեկ, հոգեբան
20-րդ	Հայոց բանակի օր /ֆիլմի դիտում /	դասղեկ , զինղեկ
21-րդ	ՏՀՏ-ների դերը կրթական և այլ ոլորտներում /զրույց /	դասղեկ, ինֆորմատիկայի ուսուցչուհի
22-րդ	Մայրենիի միջազգային օր /գրքի նվիրում /	դասղեկ, գրադարանավարուհի
23-րդ	Կոնֆլիկտային իրավիճակներ, դրանց հաղթահարման	դասղեկ,

Tiny Scanner

	ուղիները	հոգեբան
24-րդ	"Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես ". օտար լեզուների ինացության կարևորությունը /զրույց /	օտար լեզվի ուսուցիչ, դասղեկ
25-րդ	"Մայր, իմ սուրբ ու բարի " /միջոցառում՝ նվիրված մայրության տոնին /	դասղեկ
26-րդ	Աշխատասիրության դաստիարակություն. կազմակերպել դասարանական շաբաթօրյակ	դասղեկ
27-րդ	"Որ մասնագիտությունն է ինձ դուր գալիս և ինչու " /զրույց /	դասղեկ
28-րդ	Հուշարձանների և պատմական վայրերի օր. էքսկուրսիաների կազմակերպում	դասղեկ , պատմ. ուսուցիչ
29-րդ	Հեռանկարային մասնագիտություններ. ինչպես կողմնորոշվել	դասղեկ
30-րդ	Հայոց Մեծ եղեռնը. /զրույց /	դասղեկ, պատմության ուսուցիչ
31-րդ	Աշխատավորների միջազգային օր . զրույց աշխատանքի մասին	դասղեկ
32-րդ	Մայիս. Հաղթանակների ամիս /զրույց /	դասղեկ, պատմության ուսուցիչ
33-րդ	2-րդ կիսամյակի և տարեկան գնահատականների ամփոփում	դասղեկ
34-րդ	Ամառային հանձնարարականներ	դասղեկ

Tiny Scanner